

Մասնակցային մոտեցումների համառոտ ակնարկ

Մոդուլը ներկայացնում է հանրային մասնակցության կարևոր մոտեցումները և գործիքները, ներառյալ բաց տվյալների նախաձեռնությունները, հաքաթոններն ու խաղերը, գաղափարների համատեղ մշակման և համաստեղծման գործիքները:

**Սլայդերը և տեքստը՝ Նարե Բրնոյան
Խմբագիրներ՝ Տաթև Հարոյան, Սիրանուշ Հարությունյան, Գոհար Շահինյան
Խորհրդատուներ՝ Քլաուդիա Բիլինգ, Ալեն Ամիրխանյան
Տեքստը կարդաց Նոննա Գրիգորյանը
Վիդեոն պատրաստեց Արգիշտի Ազիզյանը
Լեզուներ՝ հայերեն և անգլերեն
Հրատարակման տարի՝ 2021 թ.**

Այս մոդուլը մշակվել է «Հայ-գերմանական ցանց՝ էկոհամակարգերի ծառայությունների բարելավման նպատակով ԱՏՀ հանրային մասնակցության խթանում՝ որպես կենսաբազմազանության պահպանման և կայուն զարգացման ապահովման միջոց» (GAtES) ծրագրի շրջանակում: ace.aua.am/gates

Ֆինանսավորող կազմակերպություն՝ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD), Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության ֆինանսավորմամբ

Ուսումնառության նպատակները

Բաժին 1. ծանոթանալ մասնակցային մոտեցումների էվոլյուցիային և կիրառման օրինակներին, ինչպես նաև այդ մոտեցումների իրականացման հետ կապված մարտահրավերներին:

Բաժին 2. հասկանալ որոշ մասնակցային մեթոդների էությունը և առանձնահատկությունները, ինչպես նաև գործնական օրինակների միջոցով ուսումնասիրել դրանց կիրառությունները

Բաժին 3. ուսումնասիրել, թե ինչպես են մասնակցային տարբեր մեթոդներ ու գործիքներ համատեղ օգտագործվում հստակ նպատակներ հետապնդող նախագծերում և թե ինչ արդյունքների կարելի է հասնել:

Մոդուլի կառուցվածքը

Մոդուլի բաժինները

Ներածություն. մասնակցային մոտեցումներ

Առաջադրանք

Մասնակցային տարբեր մեթոդներ և դրանց կիրառման օրինակներ

Առաջադրանք

Մասնակցային տարբեր մեթոդների և գործիքների կիրառությունը ներկայացնող դեպքի ուսումնասիրություն

Առաջադրանք

Բաժին 1

Ծանոթանալ մասնակցային մոտեցումների էվոլյուցիային և կիրառման օրինակներին, ինչպես նաև այդ մոտեցումների իրականացման հետ կապված մարտահրավերներին:

Ներածություն. մասնակցային մոտեցումներ

Մի շարք գործողություններ, որոնց նպատակն է մարդկանց հնարավորություն տալ ակտիվ և ազդեցիկ դեր ունենալ իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործում:

2000ականներից մինչ մեր օրեր

Համանախագծում,
Քաղաքացիական
գիտություն և
սոցիալական նորարարություն

1990ականներ

Մասնակցային
ուսուցում և
գործունեություն
(PRA),
Մասնակցային և
ինտեգրված
զարգացում (PID)

1980ականներ

Գյուղական
համայնքի
մասնակցության
գնահատում
(PRA)

1970ականներ

Գյուղական
պայմանների
արագ
հետազոտում
(RRA)

Հանրությանը մասնակից դարձնելու մեթոդներ և գործիքներ



Հանրությանը մասնակից դարձնելու մեթոդներ և գործիքներ

Հետազոտության և հավաքական վերլուծության մեթոդ



Քաղաքացիական գիտություն (Citizen Science)



Բաց քվեարկություն և Wiki հարցումներ



Տվյալների մասնակցային հավաք սենսորների միջոցով



Մասնակցային քարտեզագրում

Լուծումների կոլեկտիվ ստեղծման և իրականացման մեթոդ



Համանախագծում և համաստեղծում



Բաց տվյալների նախաձեռնություններ



Հաքաթոններ



Serious խաղեր



Հանրությանը մասնակից դարձնելու մեթոդի և գործիքի ընտրություն

Գործոններ, որոնք պետք է հաշվի առնել.

- Ծրագրի նպատակներ
 - Կայացնել ավելի համապարփակ և ներառական որոշումներ
 - Ավելի լավ հասկանալ շահագրգիռ կողմերի խնդիրները
 - Գտնել խնդրի լուծումներ
 - Սովորել և կիսվել այն գործիքներով, որոնք գործում են
 - Մասնակիցներին ներգրավել որոշումների կայացման գործընթացում
- Ծախսեր
- Ժամանակ

Նախագծի համար հստակ
նպատակներ սահմանելուց
հետո մի՛ վախեցեք
ստեղծագործական
մոտեցում ցուցաբերել
օգտագործվող գործիքներին:

Մասնակցային մոտեցումներ. կիրառման մարտահրավերներ

- Մասնակցությանը խթաններ և հավաքագրում
- Տվյալների վերլուծություն, վիզուալիզացիա և սինթեզ
- Պլանավորում, համակարգում և հեշտացում
- «Թվային անջրպետ» և «Տեխնոֆորիա»
- Հաղորդակցման խոչընդոտներ
- Ֆինանսավորում



Բաժին 2

Հասկանալ որոշ մասնակցային մեթոդների էությունը և առանձնահատկությունները, ինչպես նաև գործնական օրինակների միջոցով ուսումնասիրել դրանց կիրառությունները

Քաղաքացիական գիտություն

Մասնակցային մոտեցում, երբ գիտնականներն ու քաղաքացի կամավորները միասին աշխատում են գիտական տվյալներ կամ դիտարկումներ հավաքելու կամ վերլուծելու համար:

Ինչպե՞ս է դա իրականացվում


- Քաղաքացիական դիտարաններ և հեռահար զոնդավորում
- Դասընթացներ, դաշտային աշխատանքներ և աշխատաժողովներ
- Թվային մեդիա և մասնակցային լրագրություն
- Եվ այլն



Օրինակ. «Ես կաշառք եմ տվել»



- Հնդկաստանում և այլ երկրներում կոռուպցիայի դեմ պայքարի հարթակ՝ կաշառք տալու գործընթացին հետևելու և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու միջոցով:
- Տվյալների հավաք քաղաքացիների և պետական պաշտոնյաների անանուն զեկույցների միջոցով: Զեկույցները ներառվում են քաղաքային, նահանգային և պետական մակարդակներում հանրային ծառայությունների կոռուպցիայի տվյալների բազայում:
- Ծրագիրն այժմ համագործակցում է 25 երկրների հետ, որոնք կրկնօրինակել են կայքը:



Հղում՝ http://www.ipaidabribe.com/?fbclid=IwAR2IG36jUmNEreA8KpduMd2GL5h-c1I6zuNZSIOpNDOock_ATrIoAwGr9yM#gsc.tab=0
Հղում՝ <https://www.hbs.edu/faculty/Pages/item.aspx?num=42758>

Առաջադրանք



Դիտեք հետևյալ երեք կարճ տեսանյութերը քաղաքացիական գիտության և այն արդյունքների մասին, որոնց հնարավոր է հասնել դրա միջոցով:
(տեսանյութերն անգլերեն են)




Համանախագծում և համաստեղծում

Համատեղ իրականացվող ուսումնասիրություն և գաղափարների մշակում, երբ տարբեր շահագրգիռ կողմեր նախագծման գործընթացի ողջ ընթացքում կիսում և միավորում են իրենց գիտելիքները: Գործընթացի արդյունքները սովորաբար շոշափելի են:

Ինչպե՞ս է դա իրականացվում

- աշխատաժողովներ,
- խաղեր,
- հաքաթոններ և մրցույթներ,
- և այլն:




Առաջադրանք



Դիտեք հետևյալ երեք կարճ տեսանյութերը համանախագծման և ժողովրդավարական նախագծման կարևորության մասին:

(տեսանյութերն անգլերեն են)



Աշխատաժողովներ

Համակարգված, նպատակային մշակված հանդիպումներ, երբ տարբեր շահագրգիռ կողմեր միավորվում են մի շարք գործողություններ իրականացնելու համար:

Ի՞նչ անել

- Գաղափարների համատեղ մշակման վարժություններ
- Ցանցի, ուղու, համակարգի և մտքի քարտեզագրման վարժություններ
- Առաջնահերթություններ սահմանելու վարժություններ (օրինակ՝ freelisting և card sorting)
- Կոլեկտիվ ազգագրական և որակական հետազոտություն (օրինակ՝ հարցազրույցներ, ֆոկլուսային խմբեր, լուսանկարների միջոցով արտահայտում և այլն)
- Նախատիպավորում (մոդելի կառուցում)




Օրինակ. «Մոլդովականի ձայները»



- Շատ փախստականներ են ապրում Երևան քաղաքի Մոլդովական փողոցում՝ նախկին հանրակացարանների շենքում: Տարածքում չկան բավականաչափ հանրային տարածքներ և կա **սոցիալական բացառման** խնդիր:
- Ուրբանիստան կիրառեց մասնակցային մոտեցում: **Թաղամասի բնակիչների հետ անցկացվեցին մի շարք աշխատաժողովներ.**
 - **Համատեքստային հարցումներ**
 - **Մասնակցային պատումներ** երեխաների հետ (շարադրություններ «Ի՞նչ կփոխեի իմ թաղամասում, եթե ես լինեի քաղաքապետ» թեմայով:)



Նկ. 21. Տաղի



Նկ. 20. Լուսավորության օրինակներ

Հղում՝ <https://urbanista.am/moldovakan>

Առաջադրանք



1. Ուսումնասիրեք հետևյալ հղումները՝ ծանոթանալու մի շարք առաջադրանքների և գործիքների, որոնք կարող են օգտագործվել աշխատաժողովների ընթացքում.

<https://citiesofservice.jhu.edu/citizen-engagement-techniques/>

<https://participedia.net/search?selectedCategory=method>

<https://www.designkit.org/methods>

2. Մտածեք այն գործոնների մասին, որոնք կարող են ազդել աշխատաժողովի ընթացքում օգտագործվող առաջադրանքների կամ գործիքների ընտրության վրա:


Առաջադրանք

Դիտեք դիզայն մտածողության վերաբերյալ աշխատաժողովի ձայնագրությունը, որը վարում է «Design for Change»-ի (Դիզայն՝ փոփոխության համար) հիմնադիր Կիրան Բիր Սեթին: (տեսանյութն անգլերեն է)



Մասնակցային քարտեզագրում


- **Crowdmapping.** իրական ժամանակում ինտերակտիվ տեղեկատվություն տրամադրելու նպատակով հավաքում է տվյալներ տարբեր աղբյուրներից (սոցիալական ցանցեր, տեքստային հաղորդագրություններ կամ աշխարհագրական տվյալներ):
 - Խնդրի քարտեզագրում (Issue mapping)
 - Լուծման քարտեզագրում (Solution mapping)
- **Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգ.** միավորում է աշխարհատարածական տեղեկատվության կառավարման մի շարք գործիքներ՝ մարդկանց տարածական գիտելիքները քարտեզների տեսքով ներկայացնելու համար:



Օրինակ. Syria Tracker Crisis Map



- Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ զեկույցների հավաք քաղաքացիներից՝ 2011 թ. սիրիական հակամարտությունից ի վեր:
- Ծառայությունը համադրում է տեղական լրատվամիջոցների տված տեղեկատվությունը տեղում ձեռք բերված զեկույցների հետ՝ սոցիալական ցանցերում հեշթեգեր օգտագործելով կամ էլ-փոստի նամակների միջոցով:
- Քարտեզի գործարկումից ի վեր ստացվել է գրեթե 5000 զեկույց, այդ թվում՝ զեկույցներ ավելի քան 11,000 մահվան դեպքի մասին:



Հղում՝ https://www.researchgate.net/figure/An-example-of-a-crisis-map-the-Syria-Tracker-map-Each-report-becomes-a-dot-on-the-map_fig1_302578225

Օրինակ. Honey Bee Network



- Ֆերմերների կատարած նորարարությունների վերաբերյալ աշխարհում տվյալների ամենամեծ բազաներից մեկն է:
- Հեշտացնում է հաղորդակցումը ֆերմերների, արհեստավորների, անասնապահների և նորարարություններ մշակող այլ անձանց միջև:
- Լուծումներ գտնելու համար ուսանողները «նորարարության հետախուզում» են իրականացնում և հարցում անցկացնում գյուղացիների հետ:



Հղում՝ <https://socialinnovationexchange.org/insights/honey-bee-network>
Հղում՝ <https://blog.etsy.com/en/the-honeybee-network-grassroots-innovation/>
Հղում՝ <https://www.youtube.com/watch?v=9fLmgf-YWQo>

Տվյալների մասնակցային հավաք սենսորների միջոցով (Participatory Sensing)

Քաղաքացիներն օգտագործում են իրենց բջջային սարքերը և պարզ, էժան սենսորներ իրենց շրջակա միջավայրը մասնակցային կերպով մշտադիտարկելու համար:

Օրինակներ`

- հետևել տրանսպորտային միջոցների շարժին,
- հետևել թափոնների վերամշակման գործընթացին,
- ջրի մշտադիտարկում,
- անվտանգության մշտադիտարկում,
- հետևել առողջությանը,
- հետևել ամենօրյա սովորություններին,
- և այլն:



Օրինակ. Ideas for Change



- Բարսելոնայում աղմկային աղտոտման վնասակար ազդեցությունները գնահատելու համար սենսորներ տեղադրեցին:
- Մասնակիցներին տրամադրեցին սենսորներ և ցույց տվեցին, թե ինչպես դրանցից օգտվել և փոխանակել տվյալները:
- Խորհուրդը հանրային հանդիպումներ կազմակերպեց, որոնց ընթացքում տեղացիները կարող էին քննարկել իրենց բացահայտումները և առաջարկել հնարավոր լուծումներ:



WeCount



CareAI



Citizens4Science



SalusCoop



DECODE. Right to control how we share our data




The Bristol Approach for citizen sensing

Հղում՝ <https://www.ideasforchange.com>

Առաջադրանք

Դիտեք սենսորների միջոցով տվյալների մասնակցային հավաքի (Participatory Sensing) մասին այս կարճ տեսանյութը (տեսանյութն անգլերեն է)



Բաց քվերակություն և Wiki հարցումներ


Ղեկավարը հրաժարվում է որոշման կայացման միանձնյա
իրավասությունից և խմբին ներկայացնում է մի շարք տարբերակներ՝
քվերակության համար:

Տեսակներ

- Wiki հարցումներ
- Առցանց քվերակություններ
- Առցանց մրցույթներ
- Կետերի միջոցով
քվերակություն (Dot-voting)

Առավելություններ


- Ուղղորդող չեն
- Գներատիվ և ներառական են
- Հեշտ են անցկացվում
- Տվյալները վերլուծելու հնարավորություն
[որակական + քանակական]



Օրինակ. All Our Ideas in NYC



- 2011 թվականին Նյու Յորքի քաղաքապետի Երկարաժամկետ պլանավորման և կայունության գրասենյակը վիքի հարցում անցկացրեց՝ **PlaNYC 2030 կայունության ծրագրում ամենաշատ ձայներ ստացած գաղափարները ներառելու համար:**
- Հարցումն անցկացվեց «All Our Ideas» հարթակի միջոցով:
- Չորս ամսվա ընթացքում **շուրջ 1400 հարցվածներից** ստացվել է **~32,000 ձայն և 464 նոր գաղափար:**



Հղում՝ <https://www.solvingforpattern.org/2012/12/05/matthew-salganik-wiki-surveys/>

Հղում՝ <https://www1.nyc.gov/site/orr/index.page>

Հղում՝ <https://arxiv.org/pdf/1202.0500.pdf>

Առաջադրանք



1. **All Our Ideas** հարթակին ծանոթանալու համար անցեք այս հղումով.

<https://www.allourideas.org>

2. Կարդացեք հարթակի և վիքի հարցումների հիմքում ընկած գիտության մասին:

3. Սեղմեք **Try a Wiki Survey** մոխրագույն կոճակը **PlaNYC2030** վիքի հարցմանը մասնակցելու համար: Ծանոթացեք հարցման արդյունքներին՝ սեղմելով **View Results** կոճակը:

4. Եթե մտքում կոնկրետ խնդիր կամ գաղափար ունեք, կարող եք վերադառնալ գլխավոր էջ, սեղմել **Create a Wiki Survey** կանաչ կոճակը և ստեղծել ձեր սեփական հարցումը:

Հաքաթոններ


Հաքաթոնները միջոցառումներ են, որտեղ կազմակերպիչներն առաջադրում են խնդիր կամ մարտահրավեր, և մասնակիցները մրցում են դրան լուծում գտնելու համար:

Ինչպե՛ս է իրագործվում

- Նորարարության լաբորատորիաներ
- Համալսարաններ և հասարակական կազմակերպություններ
- Մասնավոր կազմակերպություններ
- Համատեղ նախաձեռնություններ

Սոցիալական պատճառներ

- Քաղաքային հաքաթոններ
- Կլիմայի վերաբերյալ հաքաթոններ
- Քաղաքականության մշակման հաքաթոններ



Օրինակ. Թայվանի Նախագահական հաքաթոն



- Կառավարությունը սոցիալական նորարարություն նախաձեռնողներին տրամադրեց կառավարության բաց տվյալների բազան:
- Հայտերը գնահատվում էին ըստ հետևյալ չափանիշների՝ նորարարություն, սոցիալական ազդեցություն և իրագործելիություն:
- 2019 թվականին ավելի քան 100 հայտերից ընտրվեցին 10-ը:



Հղում՝ <https://presidential-hackathon.taiwan.gov.tw/en/>

Առաջադրանք



1. Անցեք հետևյալ հղումներով տարբեր սոցիալական, բնապահպանական և բիզնեսի մարտահրավերների ծանոթանալու համար:

<https://innocentive.wazoku.com/#/community/9396a088f8614c2eac89aacf2ae1c624/home-page>

<https://www.openideo.com/challenges>


2. Ուսումնասիրեք քաղաքացիների կողմից առաջարկված տարբեր լուծումները, մտածեք Ձեզ հետաքրքրող մարտահրավերների հնարավոր լուծումների մասին և հրապարակեք դրանք հարթակում:

Բաց տվյալների նախաձեռնություններ

Չմշակված տվյալներ, որոնք հավաքում են մարդիկ կամ կազմակերպությունները, հրապարակվում են էլեկտրոնային այնպիսի ձևաչափով, որը կարող են կարդալ մեքենայացված համակարգերը: Բաց տվյալներն այնուհետև տարածվում են առցանց և կարող են նորից օգտագործվել ուրիշների կողմից:

Տեսակներ


- բաց API-ներ,
- տվյալների փոխանակում,
- Վեբի ծրագրեր,
- և այլն:



Օրինակ. OpenCorporates



- Հավաքում է տվյալներ քաղաքացիներից, ովքեր թարմացնում են հարթակը, լրացնում տվյալներ, բացահայտում են սխալները և ներմուծում համացանցից ձեռք բերված տվյալներ:
- OpenCorporates-ը դարձրել է աշխարհում կազմակերպությունների տվյալների ամենամեծ բաց բազան, որում գրանցված են ավելի քան 100 միլիոն կազմակերպություններ:




Հղում՝ <https://opencorporates.com>

Օրինակ. Public Lab



- Բաց համայնք քաղաքացի գիտնականների համար, որի նպատակն է աջակցել բնապահպանական հարցերի շուրջ արդարադատության խնդիրներ ունեցող համայնքներին:
- Public Lab-ն օգտագործում է վիքի ծրագրեր քաղաքացիական գիտության նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն, փաստաթղթեր և հրահանգներ հավաքելու համար:



Հղում՝ <https://publiclab.org/tag/citizen-science>

Հղում՝ <https://www.chc4you.org/public-labs-citizen-science-hub/>

Serious խաղեր (Gamification)

Խաղային տարրերի օգտագործում՝ բարդ համակարգերը փորձարկելու, որոշակի նպատակների իրականացմանն ուղղված հատուկ վարքագիծ խթանելու, տարբեր գաղափարներ ստանալու կամ տվյալների հասանելիության համար:

Կարող են օգնել.

- ստանալ գաղափարներ լուծումների վերաբերյալ,
- փորձարկել գաղափարները սիմուլյացիայի միջոցով,
- ցույց տալ որոշումների կայացման հետ կապված փոխզիջումները,
- խթանել շահագրգիռ կողմերի ներգրավումը լուծումների իրագործման գործընթացում:



Ուսումնասիրեք 2030 SDGs խաղը տեսնելու համար, թե ինչպես կարող են խաղերն օգտագործվել կայունության պլանավորման համար <https://2030sdgsgame.com>

Օրինակ. Sea Hero Quest



- Բջջային խաղ, որը խաղացողների գործողություններն օգնում են գիտնականներին հասկանալ դեմենցիա հիվանդությունը և պայքարել դրա դեմ:
- Ընդամենը երկու րոպե խաղալով ստեղծվում են նույնքան քանակությամբ տվյալներ, որքան կստեղծվեր 5 ժամ լաբորատոր հետազոտություն կատարելու դեպքում:
- Նախագիծը 4,3 միլիոն խաղացողներից հավաքել է նույնքան տվյալներ, որքան հնարավոր կլիներ ստանալ հետազոտությունների միջոցով 17,600 տարվա ընթացքում:



Հղում՝ <https://www.alzheimersresearchuk.org/research/for-researchers/resources-and-information/sea-hero-quest/>

Օրինակ. QuestaGame



- Բջջային խաղ, որի մասնակիցները դրսույն զբոսնում են և ուսումնասիրում, թե որ թռչունները, միջատները և վայրի տեսակներն են նկատելի տարվա այդ ժամանակահատվածում:
- Մասնակիցները միանում են որոնումներին, մրցում են իրենց ընկերների հետ, ընդլայնում իրենց հավաքածուն և զվարճանում:
- Բոլոր դիտարկումները գրանցվում են ըստ գտնվելու վայրի, ամսաթվի, ժամի և ուղարկվում են յուրաքանչյուր խաղացողի երկրի ազգային տվյալների բազա:



Հղում՝ <https://citizensciencegames.com/games/questagame/>

Առաջադրանք



1. Անցեք հետևյալ երկու հղումներով այլ խաղերի մասին տեղեկանալու և ոգեշնչվելու համար.

<http://www.megamification.com/15-examples-of-city-gamification-that-are-not-pokemon-go/>

<https://citizensciencegames.com/games/>

2. Մտածեք Ձեր համայնքի առջև ծառայած որևէ խնդրի մասին (օր.՝ հանրային տարածքների բացակայություն, թափոնների կառավարման խնդիրներ, կրթության հասանելիություն և այլ):

3. Մտածեք, թե ինչպե՞ս կարող եք serious խաղերի միջոցով ներգրավել համայնքի անդամներին՝ խնդիրներին համատեղ լուծումներ գտնելու համար:

Բաժին 3

Ուսումնասիրել, թե ինչպես են մասնակցային տարրեր մեթոդներ ու գործիքներ համատեղ օգտագործվում հստակ նպատակներ հետապնդող նախագծերում և թե ինչ արդյունքների կարելի է հասնել:

Crowdsourcing. Մեխիկո քաղաքի սահմանադրությունը



- 2016 թ. սկսած Մեխիկո քաղաքին թույլատրվեց ընդունել իր քաղաքային սահմանադրությունը: Գործընթացը ենթադրում էր մարդկանց ցածր ներգրավվածություն:
- Վստահություն առաջացնելու և նոր գաղափարներ հավաքելու համար քաղաքապետ Միգել Անխել Մանսերան որոշեց այդ գործընթացին մասնակից դարձնել նաև քաղաքի բնակիչներին:
- Ձևավորվեց Մեխիկոյի 28 բնակիչներից կազմված հանձնաժողով:



Հղում՝ <https://congress.crowd.law/files/cdmx-case-study.pdf>
Հղում՝ citiesofservice.org

Crowdsourcing. Մեխիկո քաղաքի սահմանադրությունը



- Քաղաքի վերաբերյալ տեղի բնակիչների տեսլականներին ծանոթանալու համար անցկացվեց «Պատկերացրու քո քաղաքը» վերնագրով հարցում:
- Հավաքագրեցին 200 ուսանող կամավորների, ովքեր քաղաքացիների հետ հանրային տարածքներում պլանշետների միջոցով հարցումներ անցկացրեցին:
- Քաղաքը համագործակցում էր Change.org-ի հետ, որպեսզի մարդիկ սահմանադրության մեջ կոնկրետ հոդվածներ ներառելու վերաբերյալ խնդրագրեր ներկայացնեն:



Պատկերը՝ <https://citiesofservice.jhu.edu/resource/civic-bridge/>

Crowdsourcing. Մեխիկո քաղաքի սահմանադրությունը



- Արդյունքում հավաքվեց հարցման 26,000 պատասխան և 280,000 ստորագրություն տարբեր հարցերի շուրջ 357 խնդրագրերի համար:
- Սահմանադրությունը պաշտոնապես հաստատվեց 2017 թվականի փետրվարին: Այն ներառում է հանրության մասնակցության շնորհիվ ձեռք բերված տարրեր, որոնք կարևոր ազդեցություն ունեն քաղաքականության վրա:



Պատկերը՝ <https://citiesofservice.jhu.edu/resource/civic-bridge/>

Crowdsourcing. Մեխիկո քաղաքի սահմանադրությունը




Օգուտներ

- Մասնակցության տարբեր եղանակներ ունենալը
- Հասարակության կողմից առաջադրված կետերը ներառելը
- Change.org-ի հետ համագործակցությունը

Մարտահրավերներ

- Վստահության պակաս
- Թվային անջրպետ



Պատկերը՝ <https://citiesofservice.jhu.edu/resource/civic-bridge/>

Առաջադրանք



1. Ուսումնասիրեք քաղաքացիական գիտության նախագծերի հետևյալ ցանկերը.

<https://www.nationalgeographic.org/idea/citizen-science-projects/>

<https://www.citizencyberlab.org/projects/>

<https://www.citizenscience.gov/toolkit/case-study/#>

2. Ընտրեք մեկ նախագիծ, որը Ձեր հետաքրքրությունների շրջանակում է և մասնակցեք դրան:

Վերջ

Այս մոդուլը մշակվել է «Հայ-գերմանական ցանց՝ էկոհամակարգերի ծառայությունների բարելավման նպատակով ԱՏՀ հանրային մասնակցության խթանում՝ որպես կենսաբազմազանության պահպանման և կայուն զարգացման ապահովման միջոց» (GAtES) ծրագրի շրջանակում:

ace.aua.am/gates

Ֆինանսավորող կազմակերպություն՝ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը (DAAD), Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության ֆինանսավորմամբ